



ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈՒՅԱՆ (Արվեստագիտության թեկնածու)

ԳՐԻՉ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ

Վասպուրականի 15-րդ դ. արդյունաշատ ու վարժ գրիչներից է եղել Կարապետ քահանան, որը տիրապետել է նաև մանրանկարչության արվեստին: Վանեցի էր և իր



Հովհաննես տուացողի դիմանկարը

ստեղծագործական ողջ կյանքը անց է կացրել մանր արվեստների մեծ ավանդույթներ ունեցող այդ հիմնավորց քաղաքում:

Կարապետի ընդօրինակած՝ ձեռագրերի հիշատակարաններում տվյալներ կան նրա անձի ու ընտանիքի մասին: Ծնվել է 14-րդ դարի վերջին տասնամյակին, ամենայն հավանականությամբ 90—95 թվականներին: 1418 թվականին նա արդեն քահանա էր և այն էլ՝ «թափուրս ի քարեաց գործոց, մեղանչական յանմեղաց, անյիշելիս ի գրչաց, անկարգս ի կարգաւորաց՝ Կարապետ անարժան քահանայ, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ընդ հովանեաւ սրբոցս կատարեցի զսուրբ անտարանս, մեղսամած մատամբս յարիմեցի, միթէ քաւի մեղս ի մարմնի»¹:

Ինքնակախարակման այս խոսքերը այնքան էլ հատուկ չեն շատ երիտասարդ կամ սկսնակ գրչին: Պետք է ենթադրել, որ այդ տարիներին նա 27—28 տարեկան էր. դա է վկայում նաև այն փաստը, որ հենց այդ ժամանակ էլ նա ամուսնանում է (կնոջ անունը Թանու-Խաթուն էր՝ Թամար): Շուտով երիտասարդ գրչի ընտանիքում ծնվում է անդրանիկ զավակը՝ «զդեռաբոսիկն զՄեսրոպ»:

Ձեռագրերի հիշատակարաններում Կարապետ քահանան քարեխղճորեն հիշատակում է նաև իր ծնողներին ու մերձավորագույն ազգականներին. «...և զծնողքն իմ՝

¹ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, աշխ. Լ. Խաչիկյանի, Երևան, 1955, էջ 218:

զհայրն իմ զՍտեփանոս քահանայ, և զմայրն իմ զՄիհայ, և զհարեղբայրն իմ զՄովսէս (սա միայնակաց էր), և զեղբարքն իմ զՅովաննէս քահանայ և զՄելքիսեթ՝ զհանգուցեալքն ի Քրիստոս, և զՀակոբ քահանայ, և զՅովաննէս՝ զերախտաւորքն մեր»²:

Հետագա ձեռագրերի տվյալներից իմանում ենք, որ մշակույթի այս տրամաջան մշակի ընտանիքում այդուհետև վիշտը դառնում է անքաժան ողբերգություն: Մահանում է նրա կինը՝ Թանու-խաթունը, անխնամ թողնելով մանկահասակ երեք որդիներին՝ «և զորքացեալ զառակս իմ զՄեսրոպ, Ջաբղմսեթն, և զՄելքոն», սրտի մորմոքով գրում է Կարապետը: Շուտով մահանում է նաև կրտսեր եղբայրը:

1451 թվականին նոր, ծանր ողբերգություն է ապրում մեր նկարիչը. մահանում է նրա միջնեկ որդին՝ Աբղմսեթը. «... տղայ հասակաւ առ Քրիստոս փոխեցաւ և սուգ անմխիթար եթող եղկելոյս»:

Տարաքախտ գրիչը ստիպված է լինում երկրորդ անգամ ամուսնանալ, այս անգամ Խոնդ-խաթունի հետ: Այս երկրորդ կնոջից նա մի արու զավակ է ունենում, Ստեփանոս անունով: Սակայն ճակատագիրը դաժան է գտնվում նաև այս մանկան նկատմամբ. նա ևս մահանում է պատանի հասակում:

1462 թվականին ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում ծերունի Կարապետը տեղեկություն է հաղորդում արդեն իր հարսի մասին, ավագ որդու՝ Մեսրոպի կնոջ, որը, հավանաբար, հետևելով իր կեսրայրի հորդորներին, իրեն նվիրում է ձեռագրերի պատրաստման արհեստին. «Հարսիկս իմ, զԽապիպ-խաթուն, որ աշխատեցաւ ի կոկել թղթիս»: Ի դեպ պատանի Ստեփանոսը, Կարապետի երկրորդ կնոջ որդին, ևս ժամանակին զգնել էր հորը՝ թղթի կոկման աշխատանքում:

Վերջին տեղեկությունը Կարապետի մասին մեզ հայտնի է 1476 թվականից, երբ նա իր հայրենի քաղաքում, արդեն ծեր ու վատառողջ, աշխատակցում է Ագարիա գրչին՝ ավարտելու մի ճառընտիրի ընդօրինակությունը, իսկ այնուհետև կազմում է այդ ձեռագիրը. «...եւ զիս՝ զանարծան զԿարապետ տուտանուն քահանայ, որ ըստ իմում տկար անձամբս յանձն առի և ազնակաւնութեամբն Աստուծոյ գրեցի Ի (20) տետր ի սուրբ գրողս և իմում տկար մատամբս կազմեցի...»³:

Այսպիսով ենթադրում ենք, որ Կարապետն ապրել է շուրջ 80—85 տարի: Նրա տակյաց կյանք է վարել՝ իր բոլոր ձեռագրե-

րը ընդօրինակելով Վանում՝ «...ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաղոսի, և սուրբ հայրապետին Սահակայ, և սուրբ Տիրամար Աստուածածնին, և սուրբ զարախարացն Վարդանեանց»:

Կարապետը տեղեկություն է թողել նաև իր ուսուցչի մասին, «զՄկրտիչ սրբանեալ քահանայ, որ բազում աշխատեցաւ ի վերայ մեր...»:



Քաղաքացիական կոտորածը

Դառն ու վշտաբեկ, բայց ստեղծագործական առումով բովանդակալից է եղել մեր հեղինակի կյանքը՝ բնորոշ նաև մեր գրիչներից ու մանրանկարիչներից շատերին: Ապրելով ողբերգություններ և կրելով ամեն մի զրկանք, նրանք համատորեն տոկացել են օրվա ազգային մշակույթի պահպանման ու զարգացման նվիրական գործին: Կարապետ քահանայի ընդօրինակած աշխատանքներից մեզ հայտնի է տասնութ ձեռագիր-մատյան:

1. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 4931, Ավետարան, 1418 թվ., Վան, գրիչ և ծաղկող՝ Կարապետ քահանա, սուսցող՝ Ղազար տանուտեր, թերթ՝ 293, թուղթ, 25×17 մեծությամբ, երկայուն՝ բոլորգիր:

Մանրանկարներ՝ 1ք՝ Հիսուսը փառքի

² Նույն տեղ:

³ Նույնը, մասն Բ, Երևան, 1958, էջ 406:

աթոռին, 2ա՝ Աքրահամի զոհաբերությունը, 2բ՝ Ավետում, 3ա՝ Ծնունդ, 3բ՝ Կոտորումն մանկանց, 3բ՝ Մկրտություն, 4ա՝ Տեառնընդառաջ, 4բ՝ Հարսանիքը Կանայում, 5ա՝ Հիսուսի հրաշագործությունները, 5բ՝ Այլակերպություն, 5բ՝ Ղազարոսի հարությունը, 6ա՝ Մուտք Երուսաղեմ, 6ա՝ Ոտնվա, 6բ՝ Խաչելություն, 6բ՝ Դժոխքի ավերումը, 7ա՝ Թաղումն Հիսուսի, 7ա՝ Հարություն, 7բ՝ Համբարձում, 8ա՝ Սուրբ Հոգու գալուստը:

Խորաններ՝ 9ա, 13բ: Ավետարանիչներ և անվանաթերթեր՝ 14բ—15ա, 83բ—99ա, 145բ—146ա, 227բ—228ա:



Հիսուսի հրաշագործությունները

Հիշատակարան գրչի. «Ջբազմամեղ ոգի զԿարապետ սուտանուն քահանայ յիշեցէք, որ գրեցի և ծաղկեցի գտորք անտարան» (էջ 14ա):

2. Մաշտոց, 1418 թվական, Վան, գրիչ՝ Կարապետ:

(Այս ձեռագրի մասին տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 219):

3. Ավետարան, 1421 թվ., Վան, գրիչ՝ Կարապետ:

(Այս ձեռագրի մասին տե՛ս «ԺԵ դարի

ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 259—260):

4. Մատենադարան, ձեռ. № 3716, Ավետարան, 1421 թվ., Վան, գրիչ և ծաղկող՝ Կարապետ, ստացող՝ Հովհաննես տանուտեր, թուղթ, թերթ՝ 303, 25,5×18 մեծությամ, երկայուն, բոլորգիր:

Մանրանկարներ՝ 1բ՝ Աքրահամի զոհաբերությունը, 1բ՝ Ավետում, 2ա՝ Ծնունդ, 2բ՝ Կոտորումն մանկանց, 3ա՝ Տեառնընդառաջ, 3բ՝ Այլակերպություն, 4ա՝ Պատարագի մատուցումը, 4ա՝ Ոտնվա, 4բ՝ Մատուցություն, 4բ՝ Պիղատոսի դատը, 5ա՝ Խաչելություն, 5բ՝ Հարություն, 6ա՝ Համբարձում, 6բ՝ Սուրբ Հոգու գալուստը, 7ա՝ ձեռագրի ստացող Հովհաննես տանուտերի դիմանկարը:

Խորաններ՝ 7բ—12ա. ավետարանիչներ և անվանաթերթեր՝ 12բ—13ա, 97բ—98ա, 150բ—151ա, 234բ—235ա:

Հիշատակարան գրչի. «Եւ ես՝ թափուրս ի բարեաց գործոց Կարապետ սուտանուն քահանայ և գործովք ունայն... մեղսամած մատմբս յարիւնեցի, միթէ քաւի մեղս ի մարմնի, ի թուականութեանս հայոց ՊԶ (1421), ի հայրապետութեան տեառն Պաղոսի և մերոյ աթոռակալի Մարգարէ վարդապետի...» (298բ):

5. Ավետարան, 1422 թվ., Վան, գրիչ՝ Կարապետ:

(Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 296):

6. Մատենադարան, ձեռ. № 4840, Ավետարան, 1435 թվ., Վան, գրիչ՝ Կարապետ, նկարիչ՝ Ստեփանոս (?), ստացող՝ Ստեփանոս տանուտեր, թուղթ, թերթ՝ 301, 27×18 մեծությամ, երկայուն, բոլորգիր: Պահպանված են թեմատիկ մանրանկարները, խորանները և ավետարանիչների դիմանկարները:

Հիշատակարան. «Գրեցաւ սուրբ անտարանս ձեռամբ սուտ գրչի և անարժան քահանայի Կարապետի, ի թվ. Հայոց ՊԶԴ. (1435 թվ.)» (էջ 296բ):

7. Մատենադարան, ձեռ. № 5530, Ավետարան, 1437 թվ., Վան, գրիչ՝ Կարապետ, մանրանկարիչ՝ Ստեփանոս սարկավազ (?), ստացող՝ Սարգիս աբեղա, թուղթ, թերթ՝ 285, 22×16 մեծությամ, երկայուն, բոլորգիր: Պահպանված են թեմատիկ մանրանկարները, խորաններն ու ավետարանիչների դիմանկարները:

Հիշատակարան. «... գրեցաւ սուրբ անտարանս ձեռամբ գրչի և անարժան քահանայի Կարապետի...» (էջ 282ա):

⁴ Բոլոր ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում ենք գրչի նույն ստորերին, ուստի այսուհետև չենք մեջբերի դրանք:

8. Մատենադարան, ձեռ. № 4893, Ավետարան, 1451 թվ., վան, գրիչ՝ Կարապետ, նկարիչ՝ Ստեփանոս սարկավագ (?), ստացող՝ Կարապետ երեց, թուղթ, թերթ՝ 266, 31×21 մեծության, երկայուն, բոլորգիր: Պահպանված են թեմատիկ մանրանկարները, խորաններն ու ավետարանիչների դիմանկարները:

9. Մատենադարան, ձեռ. № 905, Մաշտոց, 1454 թվ., գրիչ՝ Կարապետ, ստացող՝ Ավետիս կրոնավոր, թուղթ, թերթ՝ 408, 18×12,5 մեծության, երկայուն, բոլորգիր:

Կան միայն գլխազարդեր:

10. Մաշտոց, 1458 թվ., վան, գրիչ՝ Կարապետ:

(Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 105):

11. Մատենադարան, ձեռ. № 5798, Գանձարան, 1462 թվ., վան, գրիչ՝ Կարապետ, ստացող՝ Ատոմ քահանա, թուղթ, թերթ՝ 318, 21,5×16 մեծության, երկայուն, բոլորգիր:

Կան միայն գլխազարդեր:

12. Ավետարան, 1462 թվ., վան, գրիչ՝ Կարապետ:

(Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 187):

13. Մատենադարան, ձեռ. № 4162, Մաշտոց, 1467 թվ., գրիչ՝ Կարապետ, ստացող՝ Ատոմ, թուղթ, թերթ՝ 307, 27×18 մեծության, երկայուն, բոլորգիր:

Կան միայն գլխազարդեր:

14. Գանձարան, 1467 թվ., վան, գրիչ՝ Կարապետ:

(Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 259):

15. Մատենադարան, ձեռ. № 4875, Մաշտոց, 1473 թվ., վան, գրիչ՝ Կարապետ վանեցի, նկարիչ՝ Կարապետ Աղթամարցի, ստացող՝ Մարշահ Ծաքարբեկ, Զանիբեկ, թուղթ, թերթ՝ 501, 32×20 մեծության, երկայուն, բոլորգիր:

Կան 2 թեմատիկ մանրանկարներ և գլխազարդեր:

16. Մատենադարան, ձեռ. № 5013, Ավետարան, 1475 թվ., գրիչ՝ Կարապետ, նկարիչ՝ Մինաս, ստացող՝ Հովսեփ, թուղթ, թերթ՝ 290, 15×13,5 մեծության, երկայուն, բոլորգիր:

Կան տերունական նկարներ, խորաններ և ավետարանիչներ:

17. Ավետարան, 1475 թվ., վան, գրիչ՝ Կարապետ:

(Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 385):

18. Մառնիկ, 1476 թվ., վան, գրիչ՝ Ազարիս, Կարապետ:

(Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 403):

Այսպիսով, Մաշտոցյան Մատենադարանում պահվող իր ընդօրինակած ձեռագրերից Կարապետ քահանան պատկերազարդել է միայն երկուսը (№ № 1 և 4): Ինչ վերաբերում է արտասահմանյան հավաքածուներում գտնվողներին, ապա, դրանց հետ մոտիկից ծանոթ չլինելով, դժվարանում ենք ասել այդ մատյաններից քանիսն է պատկերազարդել Կարապետը:



Հիսուսի մուտքը Երուսաղեմ


Որոշ մասնագետներ Կարապետի ստեղծագործությունները շփոթել են այդ ժամանակաշրջանում վասպուրականում ապրող նույնանուն ուրիշ մանրանկարչի հետ՝ Կարապետ Ոստանցու և Կարապետ Աղթամարցու: Այդպիսի շփոթությունը մատասբ հետևվանք էր այդ նկարիչների հայրանունների և հարազատներից ոմանց անվան զուգահիսությունը:

Կարապետ քահանային նվիրված առանձին հոդված է հրապարակել Արամ Երեմյանը «Արծուի վասպուրական» հանդեսի 1964 թվ. հունվար—փետրվար համարներում⁵:

Ա. Երեմյանը ևս, հավանաբար մոտիկից

⁵ Գրիչ և մանրանկարիչ՝ Կարապետ քահանա:

ծանոթ չլինելով Կարապետի թողած ժառանգությունը, որը հիմնականում Մաշտոցյան Մատենադարանում է, չի խուսափել որոշ անճշտություններից: Կարապետ Վարդանյանը շփոթված է Կարապետ Ոստանցու հետ, որը միանգամայն այլ անձնավորություն է: Բացի այդ, Կարապետի գործությունը Ա. Երեմյանը սահմանափակել



խորան

է 1445 թվականով, ըստ որում, ընդգրկելով միայն տասնմեկ ձեռագիր: Այն էլ ասենք, որ Կարապետ քահանան առնչություն չի ունեցել Ոստանի և Վարագի գրչության կենտրոնների հետ, ինչպես ենթադրում է Ա. Երեմյանը:

Կարապետի պատկերագրած ձեռագրերում ընդարձակ կերպով ներկայացված է: ավետարանական տոնական շարք: Սակայն դրանցում պատկերագրական այնպիսի մոտիվներ չկան, որոնք հանդիպած չլինեն Վասպուրականի 14-րդ դ. մանրանկարիչների, հատկապես Կիրակոս Արևակեցու, Զաքարիա Աղթամարցու, Մերուհի, Հովհաննես Խիզանցու ստեղծագործություններում: Բայց որքան էլ միանման են թվում այդ մանրանկարները, ուշադիր քննության դեպքում, այնուամենայնիվ, ի հայտ են գալիս ոչ քիչ հետաքրքրական կողմեր՝ հատկապես աշխարհիկ նախապրությունների ու տրամադրության առումով: Օրինակ, ազգագրական

առումով ուշագրավ մի շարք մանրամասներ կան մոգերի պատկերներում «Ծննդյան» տեսարանից (իշխանական տարազը, արդև ու զարդը, ձիերը և այլն): Իսկ «Մուտք Երուսաղեմ» նկարում հեղինակի մակագրությունները՝ «Սուրբ Ծաղկազարդը», «զհանդերձն տաքածանեն ի ճանապարհ» ուղղակի վավերացնում են արտահայտված տոնական զվարթ տրամադրությունը:

Առանձին խորհելու տեղիք է տալիս Հերովդես թագավորի դիմապատկերը «Մանկանց կոտորածի» տեսարանում: Թվում է, թե այն վերափոխված է ժամանակակից որևէ բռնակալի կամ չարագույժ խանի կերպարանքով. մոնոլիթական տիպի դիմագծեր, այն էլ՝ բավականին անհատականացված (ենթադրում ենք նաև, որ դա ավելի ուշ շրջանի վերագծանկարում լինի, մանավանդ այդպիսի դեպքեր հանդիպում են միջնադարյան մեր ձեռագրերում, հատկապես Վասպուրականում):

«Խաչելություն» տեսարանում պարականոն մի հետաքրքրական մոտիվ կա: Ըստ ավանդության Հիսուսի կողք նիզակահարող Ղուկիանոսի մի աչքը կույր է եղել: Հիսուսի կողք խոցելու ժամանակ արյան մի կաթիլ ցայտում է նրա աչքի մեջ և ապաքինում: Կարապետ քահանան նկարը մեկնաբանելիս հետևել է այս ավանդությանը: Պատկերված է, թե ինչպես Հիսուսի բուժիչ արյունը ընկնում է ուղիղ Ղուկիանոսի աչքի մեջ:

Ծանաչողական առումով չափազանց հետաքրքրական է № 3716 ձեռագրի 7ա էջում պատկերված Հովհաննես ստացողի դիմանկարը՝ փայտյա աթոռի վրա նստած, մուսուլմանական հիշեցնող տարազով:

Թեմատիկ մանրանկարների համեմատությամբ խորանագրողներն ավելի վարժ կատարված տեսք ունեն: Կարապետը այստեղ հետևում է Վասպուրականում ընդունված սովորույթին. հիմնականում պարզ կամարներն են՝ բուսական զարդահարդարանքներով ու թռչնապատկերներով:

Նույնը պետք է ասել նաև ավետարանիչների դիմանկարների կապակցությամբ առկա են սովորական «Վասպուրականյան» տիպերը:

Կարապետի վրձնած աշխատանքների արժեքն ու հետաքրքրությունը դրանց ժողովրդական լայն արվեստի ստեղծագործության էություն մեջ է, ժողովրդական մտածելակերպի ու ժողովրդի գեղագիտական հմայմանի պատկերացումների պահպանման մեջ: Այդ կարգի նկարողները, այս դեպքում ճիշտ կլինի ասել՝ ծաղկողները, չունեն պրոֆեսիոնալ բարձր մակարդակ: Լինելով հմուտ և բանիմաց գրիչներ, նրանք երբեմն իրենց համեստ ունակություններն էին դրսև-

վորում մասն ձեռագրերի ծաղկագարդման առարկեղում: Այդպիսին է Կարապետը: Ա՛րդ, նույնիսկ առաջին իսկ պատկերագրողած ձեռագրում մա անկեղծորեն խոստովանում է արվեստում իր ոչ հմուտ լինելը. «Ջրագմամեղ ոգի գկարապետ տուտանուն քահանայ յիշեցէք, որ գրեցի և ծաղկեցի զսուրբ անտարաճ, և անարհեստութեանս անմեղադիր լերուք, քանզի այս առաջին ծաղկին էր...»⁶:

Սակայն նկարչի պարզունակ գծանկարը չի խանգարել որոշ դեպքերում միտքը խիստ դիպուկ և արտահայտիչ հրամցնելուն: Այստեղ, իհարկե, առաջին հերթին պետք է հիշել գեղանկարչության ժողովրդական ավանդների կիրառությունը: Դա ձևերի անմիջական ընկալման և հնարավորին չափ պարզ տեսքով մշակելու դարից դար անցնող սովորույթն է, որը յուրաքանչյուր նկարիչ իր անձնական պատկերացումների ու հնարավորությունների սահմանում մեկնաբանում է յուրովի՝ ինչ-որ բան ավելացնելով կամ պակասեցնելով, ընդհանուր մշակված այդ սկզբունքներն իրենք դարձնելով:

Ժողովրդական գեղանկարչության սովորույթների պահպանմամբ ու կիրառմամբ պետք է բացատրել մասն Կասպորականի մանրանկարչության գունային արտակարգ հնչեղությունն ու տպավորության թարմությունը:

Մաքուր դրված գույները խիստ արտահայտված գծանկարի, խոսուն դեմքերի և աշխույժ շարժումների ամբողջականության հետ այդ մանրանկարների գեղարվեստական բովանդակության բացահայտման հիմնական միջոցն են հանդիսանում: Սակայն սխալ կլիներ այստեղ նախապատվություն տալ այդ գործունեից որևէ մեկին: Եվ եթե Կասպորականի մանրանկարներում ավելի անսովոր է թվում գունագեղությունը, ապա դա գալիս է ձեռագրերի պատկերագրողման Կասպորականում ընդունված հայտնի սկզբունքներից: Մի քանի խոսք այդ մասին:

Գունային լուծումը խստորեն պայմանավորված է էջի ամբողջական կազմակերպումից: Օգտագործվող չորս-հինգ գույների հետ (կարմիր, կանաչ, կապույտ, դեղին) հնչեղության գործում համազոր նշանակություն է ստանում մասն թղթի մաքուր ֆոնը: Հատկապես մուգ շագանակագույնով ուրվագծված գունային վառ արտահայտված ձևերն ասես անջատվում են էջի սպիտակ հարթությունից՝ ստանալով ռելեֆային տպավորություն:

Որպես կարգ, Կասպորականի մանրա-

նկարներում գունային արտահայտչականությունը չի կապվում լուսավորվածության վիճակի կամ լուսաստվերների հետ: Այն որոշվում է պատկերի առանձին գունամասերի զուգորդմամբ, որը Կասպորականում ավելի շատ կառուցվում է ուժեղ հակադրությունների վրա: Ժողովրդական արվեստի սովորույթներից եկող այդ սկզբունքն էլ իր հերթին պայմանավորում է ողջ գունաշարի տեղայնության բնույթը. այսինքն, երբ գունաշարը կառուցվում է մանրամասների միջոց գրեթե նույն, պայմանականորեն պատճառաբանված, գունային համակցությամբ՝ անկախ հորինվածքների ձևից ու գեղանկարչական կերտարվեստական այլ պարագաներից: Այստեղ արդեն հասկանալիորեն իր դերն է խաղում մասն գույնի՝ քրիստոնեական ըմբռնումներից եկող չափերի պահպանումը: Այս հատկանիշներն ընդհանրապես հատուկ են միջնադարյան արվեստին, սակայն առավել ևս բնութագրական՝ Կասպորականի մանրանկարչությանը:

Կասպորականի մանրանկարիչները գրտում են գունային մշակման հետաքրքրական մասն այլ միջոցներ: Օրինակ, հաճախ մեկ գույնով ծածկված հարթությունը աշխուժացվում է նույն գույնի մուգ գծերանգներով: Հատկապես լուսավոր ֆոնի հետ, ինչպիսին ձեռագրի էջի մաքրությունն է, այդ եղանակն ավելի է մեծացնում գույնի տեսլային շահեկանությունը՝ նրան հաղորդելով թափանցիկ փայլ: Գույնի ինքնուրույնացման այդպիսի հնարանքները մասամբ կիրառվել են մասն ժողովրդական արվեստի մյուս մարզերում՝ գորգագործության, ասեղնագործության, կապերտների, ազգային տարազի մեջ և այլուր:

Էջի գունային տպավորության ուժեղացման նպատակով երբեմն Կասպորականի մանրանկարիչները դիմում են մասն հատվածային միագունության, երբ նկարում զարդապատկերն ամբողջապես տրվում է միայն մեկ գույնով կամ լավագույն դեպքում՝ երկու: Օրինակ, Կարապետ քահանայի մոտ այդ սկզբունքը կիրառված է «Կանայի հարսանիք»-ի պատկերում: Մատուկակներից մեկի պատկերն ամբողջովին մեկնաբանված է կարմրով, մյուսինը՝ կանաչով, և այլն: Այսպիսի դեպքերում տպավորությունը, ինչպես սկզբում ասացինք, ամբողջ էջի կազմակերպման միջոցով է արտահայտվում:

Վերջացնելով մեր խոսքը, Կարապետ քահանայի մասին ասենք, որ այդ անձնուրաց երախտավորը ժողովրդական ստեղծագործողին բնորոշ գործունեությամբ (մա գրիչ էր, մանրանկարիչ ու կազմարար) իր համեստ ծառայությունն է մատուցել մեր ազգային մշակույթին:

⁶ Ձեռ. № 4931, էջ 14ա;